

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.03.2021թ. թիվ 2112443032 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 30 >> 03 2021թ. 7-13 5322

ք.Երևան

«Ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ալեքսան Նազանյանի ՄԴ/26659-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Աջափնյակ վաչական շրջանի Հալաբյան փողոցի 17 շենքի 3 բնակարանի բնակիչ Ալեքսան Նազանյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112443032 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը իրավախախտման հետ,ինչպես նաև խնդրել է ներողամիտ լինել այն բոլոր վարորդների նկատմամբ ովքեր Բաղրամյան պողոտայի փակ լինելու պատճառով շրջանցում էին Պոռչյան,Դեմիրճյան,Սարյան փողոցներով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուին վարչական տույժի ենթարկելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

«Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին»>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112443032 որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Սարյան-Կ.Դեմիրճյան փողոցների խաչմերուկի հատվածում 4.1.2՝«Երթևեկությունը դեպի աջ»>> ճանապարհային նշանի ազդման գոտում երթևեկելով դեպի ձախ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների

կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ինչ վերաբերվում է դիմումատուի խնդրանքին, ապա ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.03.2021թ. թիվ 2112443032 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ալեքսան Նազանյանին:



Ե. Կարապետյան